«Grassroots» մշակութային դրամաշնորհային աջակցության ծրագիր ՖՏ 2023. «Արամ Խաչատրյան համերգասրահում աուդիո և ձայնագրման սարքավորումների բարելավման ծրագրի» ստորագրման արարողությունը

2024 թվականի մարտի 12-ին Արամ Խաչատրյան համերգասրահում Ճապոնիայի կառավարության «Grassroots» մշակութային դրամաշնորհային աջակցության ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ «Արամ Խաչատրյան համերգասրահում աուդիո և ձայնագրման սարքավորումների բարելավման ծրագրի» դրամաշնորհային պայմանագրի (մինչև 72,000 ԱՄՆ դոլար) ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Ն.Գ. պարոն Առկի Յուտակայի և «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի տնօրեն պարոն Նորայր Նազարյանի միջև՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ պարոն Դանիել Դանիելյանի ներկայությամբ:

Ծրագրի նպատակն է հնարավորություն տալ Արամ Խաչատրյան համերգասրահում ելույթ ունեցող Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբին և այլ նվագախմբերին ու անհատ երաժիշտներին ձայնագրել և հեռարձակել համերգները շատ ավելի բարձր որակով, քան այսօր, և շարժվել ձայնագրման և հեռարձակման միջազգային նորագույն չափանիշներին համահունչ՝ ձեռք բերելով նոր և ժամանակակից սարքավորումներ: Սա Ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբին տրամադրվող երկրորդ դրամաշնորհային աջակցությունն է: Առաջինը տրամադրվել է 1999 թվականին՝ «Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբին երաժշտական գործիքների և ձայնային սարքավորումների ծրագրի» շրջանակներում:

Արարողության ընթացքում պարոն Նազարյանը ողջունեց հյուրերին՝ իր երախտագիտությունը հայտնելով Ճապոնիայի կառավարությանը, որից հետո դեսպան Առկին և պարոն Դանիելյանը հանդես եկան ելույթներով՝ մաղթելով ծրագրի հաջող իրականացում ներգրավված կողմերին:

Դեսպան Առկիի ելույթը

Պարոն Նազարյանի ելույթը

Պարոն Դանիելյանի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը



Ձեռքսեղմում

Խմբային նկար